«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ
ՇԻՐԱԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

SHIRAK BRANCH
of NGO "The A. D. Sakarov Armenian Human Rights Protection Centre"

Ե-25/05-3 21.05.2025

Լոռու մարզպետ
Արամ Ղազարյանին

Հարգելի պարոն Ղազարյան,

Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի մասնաճյուղն իրականացնում է պետական, տարածքային և ՏԻՄ տարբեր կառույցների գործունեության մոնիտորինգ:

Վերոգրյալի հիման վրա և համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ, 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն՝

- Լոռու մարզում ներկայումս Արցախից բռնի տեղահանված քանի՞ ընտանիք է բնակվում:
- Լոռու մարզի դպրոցներից յուրաքանչյուրում Արցախից բռնի տեղահանված քանի՞ աշակերտ է սովորում:
- Լոռու մարզի մանկապարտեզներից և նախակրթարաններից յուրաքանչյուրում Արցախից բռնի տեղահանված քանի՞ երեխա է ընդգրկված:
- Արցախից բռնի տեղահանված քանի՞ անձ է աշխատում ներկայումս:
- Արցախից բռնի տեղահանված քանի՞ գործազուրկ կա գրանցված:
- Որո՞նք են առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրները՝ կապված Արցախից բռնի տեղահանվածների հետ:

Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ հարցմանը պատասխանել 5-օրյա ժամկետում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին /11-րդ հոդված/:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Ս.Մարտիրոսյան,
Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոնի
Շիրակի մասնաճյուղի ղեկավար
Կատարող, մասնաճյուղի ՀՎԿ համակարգող Ա. Մանուկյան,